

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՓՈՔՐ ՎԵՂԻ
ԼՈՒՍԱՌԱՏ
ԵՂԵԳՆԱՎԱՆ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԱՐԱՐԱՏ, ՀՈՒՆՎԱՐ -2014

Այս վերլուծությունն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ տեսակետները:

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Փոքր Վեդի, Լուսառատ և Եղեգնավան համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2013 թ-ի դեկտեմբեր ամսին ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում:

Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելություններն ու ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառել է հետևյալ փուլերը.

- ⇒ PACA գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի հավաքագրում:*
- ⇒ Համայնքների տնտեսական քարտեզագրում. առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում:*
- ⇒ Առկա արժեղթանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում:*
- ⇒ Աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար:*
- ⇒ Արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում:*
- ⇒ Նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում:*
- ⇒ Ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում համայնքների ակտիվ դերակատարներին:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերլուծության իրականացնող կառույց	2
Փոքր Վեդի, Լուսառատ և Եղեգնավան համայնքներ	5
Խաղողագործություն	5
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂՈՒՄ	10
Պտաղաբուծություն	Error! Bookmark not defined.
Պտղագործության ոլորտի հիմնախնդիրները	14
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՏՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂՈՒՄ	15
ՊՏՈՒՂՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՇՂԹԱ.....	16
Դաշտավարություն	17
Լոլիկի մշակման առանձնահատկությունները	17
Ձմերուկ և սեխ	18
Հացահատիկ.....	18
Եգիպտացորեն.....	18
Արևածաղիկ	19
Հողագործության ճյուղում ոլորտների համեմատություն և մրցունակության վերլուծություն	20
Փոքր Վեդի, Լուսառատ և Եղեգնավան համայնքների մրցակցային առավելությունները	22
Անասնապահություն	23
Տնտեսության այլ ճյուղեր.....	25
Ջերմոցային տնտեսություններ	25
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃՅՈՒՂՈՒՄ.....	26
Առևտուր.....	26
Արտադրություն.....	26
Ծառայություններ.....	26
ՏՈՒՐԻԶՄ	26
Կանանց մասնակցությունը արժեքային շղթաներում	28

Համայնքների հակիրճ նկարագրություն

Փոքր Վեղի, Լուսառատ և Եղեգնավան համայնքները գտնվում են Արարատի մարզում, Արտաշատ քաղաքից 10 կմ հեռավորության վրա, մայրաքաղաք Երևանից 30կմ դեպի հարավ-արևելք: Գյուղերը տեղակայված են Արարատյան դաշտում, Արաքս գետի հովտում: Ծովի մակարդակից գտնվում են 820 մ բարձրության վրա: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռային եղանակները սկսվում են դեկտեմբերի կեսերից, միջին ջերմաստիճանը հասնում է -15 -ից -20 $^{\circ}\text{C}$: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր: Ամենաբարձր ջերմաստիճանը $+45$ $^{\circ}\text{C}$ է:

Տարբեր ժամանակներում այստեղ են ներգաղթել Իրանից, Իրաքից և Սիրիայից հայրենադարձ ընտանիքներ, ինչպես նաև 1988թ. Ադրբեջանից բռնագաղթված ընտանիքներ:

Մարդիկ այստեղ աչքի են ընկնում աշխատասիրությամբ և նախաձեռնողականությամբ, պրոբլեմների շուրջ հավաքվելու և պարզապես քննարկելու փոխարեն գտնում են հնարավորություններ և գործի անցնում: Զբաղվում են հիմնականում այգեգործությամբ, բանջար-բոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ: Վերջին տարիներին գործում են ջերմոցային և սառնարանային տնտեսություններ, տարածված է տնային պայմաններում կազմակերպվող գինեգործությունը, չրագործությունը և պանրագործությունը:

Համայնքների վիճակագրական տվյալները.

	Փոքր Վեղի	Լուսառատ	Եղեգնավան
Բնակչություն	3380	2825	2043
Տնտեսություններ	960	773	700
Արտավայր	177,91հա	-	39 հա
Վարելահողեր	1600 հա	314 հա	400 հա
Բազմամյա տնկարկներ	370 հա	225 հա	150 հա

Փոքր Վեղի, Լուսառատ և Եղեգնավան համայնքներ

Տնտեսության հիմնական ճյուղերը.

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտեղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը և որտեղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի և անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Այս համայնքներում մարդիկ հիմնականում զբաղվում են *հողագործությամբ և մասամբ՝ անասնապահությամբ*:

Հողագործության ճյուղն իր հերթին բաժանվում է երեք ոլորտների՝ խաղողագործություն, պտղաբուծություն, բանջարաբուստանային կուլտուրաների մշակություն.

Խաղողագործություն

Տնտեսությունների 60%-ը ներգրավված են խաղողագործության մեջ: Մշակում են մոտ 370 հա խաղող: Մշակվող տեսակներն են՝ Կանգուն/ռակածեթելի, Թայֆուն, Հայաստան, Կախեթ, Մսխալի և Կարմրահյութ:

Արտադրվող տեսակները	Լուսառատ 180 հա	Փոքր Վեղի 100 հա	Եղեգնավան 87 հա	Բերքատվությունը 1 հա-ից
Կանգուն	70%	70%	60%	25տ
Թայֆուն	5%	12%	-	10-12տ
Հայաստան	15%	5%	-	20տ
Կախեթ	-	10%	10%	15տ
Մսխալի	5%	5%	30%	12տ
Կարմրահյութ	5%	-	-	13 տ

Մշակվող այգիների ծավալների բաշխվածքն ըստ տնտեսությունների

Տնտեսությունների դասակարգումը	Այգիների չափերը	Տնտեսությունների բաշխվածքը
Խոշոր	1-4 հա	10%
Միջին	0,7 հա	60%
Փոքր	0,3 հա	30%

Խաղողագործությունն այս հատվածում զարգացած է եղել վաղ ժամանակներից: Հետխորհրդային տարիներին ոլորտն անկում էր ապրել՝ պայմանավորված խաղող վերամշակող գործարանների կրճատման և մթերման խնդիրներով: Մարդիկ կտրել էին այգիները, սկսել մշակել տարբեր մշակաբույսեր, անասնակեր և այլն: Վերջին տարիներին Հայաստանում գինեգործության և կոնյակագործության զարգացմանը զուգընթաց խաղողագործությունը նորից զարթոնք է ապրել: Գյուղացիները վերականգնել են իրենց այգիները, շարունակում են հիմնել նորերը: Քիչ մշակվող խաղողի տեսակներից համարյա բոլոր տնտեսություններն իրենց սպառման համար գինի են արտադրում: Սակայն գինեգործությունն այստեղ մասնագիտական առումով այնքան էլ զարգացած չէ: Միայն երկու գինեգործ են մասնագիտացել վերամշակման մեջ, ունեն սարքավորումների որոշակի տեսականի և ուզում են կազմակերպել որակյալ գինու արտադրություն և շշալցում:

Խաղողի հիմնական բերքը մթերվում է գործարանների կողմից, 1 կգ-ը՝ 145 դրամով: 1 հա խաղողի մշակության համար ծախսվում է 1,2-1,3 մլն. դրամ, և 100-200 հազար դրամ կազմում են իրացման ծախսերը: Համայնքներում արտադրվող խաղողի գերակշիռ մասը կազմում է Կանգուն տեսակը: Կանգուն տեսակի 1 հեկտարից ստացվում է միջինը 25 տոննա բերք:

1հա կանգուն տեսակի խաղողի մշակումը տնտեսություններին ապահովում է միջինը 2 125 000 դրամ շահույթ:

Հաջողված պատմություններ խաղողագործների փորձից

Արարատի մարզի Լուսառատ գյուղի բնակիչ Աղասի Ստեփանյանը համոզված է, որ խաղողի բերքատվությունը հնարավոր է մեծացնել և դրա համար չօգտվել քիմիական պարտաբանություններից: Նա իր 3 հեկտար խաղողի այգում փորձարկել է նոր մեթոդ, որն իր արդյունավետությունն ապացուցել է հաջորդ բերքի ժամանակ: «Մի ժամանակ մենք էտի ժամանակ



խաղողի վազերի վրա թողնում էինք 8-10 աչք: Իսկ հիմա ես փորձեցի ավելի քիչ քանակի աչք թողնել և դրա շնորհիվ ավելի լավ և ավելի որակով բերք ստանալ: Հիմա թողնելով մինչև 5 աչք՝ ստանում ենք ավելի որակյալ և ավելի մեծ քանակի բերք»,- նշում է մասնագիտությամբ գյուղատնտես Ստեփանյանը: «Մեր գյուղի խաղողագործները մեկը մյուսից լավն են: Բոլորն էլ համարյա նույն որակի արտադրանք են տալիս: Մանավանդ էս տարի մշակվեց էնքան բերք, որ նման դեպք չէր եղել, թե՛ որակի և թե՛ քանակի առումով»,- նշում է Լուսառատ համայնքի գյուղապետարանի առաջին կարգի մասնագետ, ֆերմեր Աղասի Ստեփանյանը:

Գինեգործ Հարությունի հաջողության պատմություն

30- ամյա Հարություն Հովհաննիսյանը բնակվում է Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում: Նա գինեգործություն սովորել է հայրիկից, որն էլ իր հերթին հմտություններ և գիտելիք է ստացել իր հայրիկից: Հարությունն ինքը գինեգործությամբ զբաղվում է 3 տարի: Մինչև այդ օգնել է հայրիկին:



«Տան բակում բազմաթիվ ծառեր ունեինք: Կախեթ տեսակի խաղողի հանդեպ իմ սերը եկել է պապիկիցս», - ասում է երիտասարդ գինեգործը: Նա ավանդույթը զարգացնում է և տարեցտարի բարելավում է որակը: Հարությունն օգտագործում է Իտալիայից և Ֆրանսիայից ներմուծված ճիւլիչ-չանչազատիչը, մամլիչ/պրեսը, պոմպը, թորման սարքը և ֆիլտրերը: Արտադրած գինին օգտագործում է իր ընտանիքի համար, բաժին է հասցնում հարազատներին, մի մասն էլ իրացնում է մարզում:

Նրա ցանկությունն է Արարատյան դաշտավայրում տեսնել գինեգործական խաղողատեսակի՝ Կախեթի աճեցման ավանդույթի վերականգնումը: Հարությունն ասում է, որ հիմա խաղողագործներն առավելապես աճեցնում են կոնյակի համար պիտանի տեխնիկական տեսակներ, այնինչ՝ Արարատի շրջանը հայտնի է իր Կախեթ տեսակի խաղողով, ինչպես օրինակ՝ Վայոց Ձորը՝ Արենիով:

Իր մրցակիցների հանդեպ առավելությունների մասին խոսելիս Հովհաննիսյանն ասում է, որ առաջին հերթին խաղողի բերքն ամբողջությամբ ինքն է աճեցնում և հավաքում: Նա, իմանալով, որ պտուղն օգտագործվելու է գինու մեջ՝ աճեցնում է առավել բարձրորակ խաղող: Հավաքելուց անմիջապես հետո խմորման համար ընտրում են ամենաառողջ ողկույզներն ու հատիկները: Բերքը տուն բերելուց և ճիւլիչ-չանչազատիչ սարքավորման միջով անցնելուց հետո ստացված հյութը լցվում է կաղնու տակառների մեջ, որտեղ սկսվում է խմորումը:

Այս ամենից հետո, Հարությունի խոսքով անհրաժեշտ է ներդնել միայն սեր, ջերմություն և հարգանք՝ գործի նկատմամբ: Հարություն Հովհաննիսյանը գինին համեմատում է երեխայի հետ, որն անցնում է զարգացման տարբեր փուլեր: Երեխայի

նման, գինուն նույնպես պետք է օգնել, որպեսզի այն անցնի հյութից մինչև գինի դառնալու բոլոր քայլերով:

Խաղողագործության ճյուղի հիմնախնդիրները

Քննարկումների ընթացքում խաղողագործների նշած հիմնական խնդիրները կապված են տնկիների, պարարտանյութերի (կառավարությունն օժանդակում է ազոտային պարարտանյութերով, սակայն սուլպերֆոսֆատը և կալիումային աղը, որոնք նույնպես ոչ պակաս կարևոր են գյուղատնտեսության համար՝ դժվարությամբ են կարողանում հայթայթել), հենասյունների ձեռքբերման, մասնագիտական խորհրդատվության և հիվանդությունների ախտորոշման, մասամբ էլ՝ բուժանյութերի հետ:

Այն տնտեսությունները, որոնք ունեն պայմանագրեր և խաղողի բերքը հանձնում են մթերող ընկերություններին, այդ նույն ընկերություններից ձեռք են բերում որակյալ բուժանյութեր, իսկ մնացածը շուկաներից ձեռք են բերում առանց երաշխիքի դեղորայք, որոնք շատ հաճախ չեն տալիս ցանկալի արդյունք: Սմեն տարի յուրաքանչյուր տնտեսություն ձեռք է բերում սյուներ այգիներում եղած արդեն ոչ պիտանի սյուների փոխարինման և նոր այգիներ հիմնելու համար: Հիմնականում ձեռք բերվող սյուները անորակ են և թանկ:

Խաղողագործները, լինելով մասնագիտացած իրենց ոլորտում, այնուամենայնիվ, հաճախ խնդրի առաջ են կանգնում՝ չտիրապետելով այգիներում ի հայտ եկած նոր հիվանդությունների չեզոքացման մեթոդներին և մշակության նոր տեխնոլոգիաներին: Մասնագիտական վերապատրաստումը համարում են առաջնային խնդիրներից մեկը:

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂՈՒՄ**

Գործողություն	Իրականացնող կողմեր
Այգեգործական ծառայությունների և սպասարկման կենտրոնի հիմնում	CARD, ՓՄՁ ԶԱԿ
Որակյալ սյուների արտադրության կամ մատակարարման կազմակերպում	Համայնքի գործարարներ
Ֆիլոքսերադիմացկուն և ցրտադիմացկուն տնկիների մատակարարում	CARD
Խաղողագործության և գինեգործության մասնագիտական դասընթացների կազմակերպում	CARD, ՓՄՁ ԶԱԿ
Որակյալ գինու արտադրություն և շալցում	Համայնքի գործարարներ
Ֆինանսական աջակցություն	ՓՄՁ ԶԱԿ
Գինեգործական ժամանակակից սարքավորումների աղբյուրների տրամադրում	CARD, ՓՄՁ ԶԱԿ

Պտղաբուծություն

Աստիճանաբար զարգանում է պտղաբուծությունը: Աճեցնում են ծիրան, խնձոր, դեղձ և սալոր: Երեք համայնքներում միասին՝ տնամերձ և վարելահողերում, մարդիկ մշակում են մոտ 380 հա պտղատու այգիներ, որից 10հա-ը՝ երիտասարդ: Գերակշռող մասը կազմում են ծիրանի այգիները՝ մոտ 230 հա, որին հաջորդում է դեղձի բաժինը՝ 80 հա: Մնացած 60 հեկտարի վրա մշակում են խնձոր և սալոր:

Մրգերի տեսակներն ու այգիների ծավալներն՝ ըստ համայնքների:

Մրգերի տեսակները	Լուսառատ 36 հա	Փոքր Վեղի 270 հա (200 հա տնամերձ, 70 հա այգի)	Եղեգնավան 60 հա տնամերձ	Բերքատվությունը 1 հա-ից
Ծիրան	55%	80%	30%	30տ
Դեղձ	30%	10%	20%	20տ
Խնձոր	15%	5%	30%	10տ
Սալոր	-	5%	20%	8տ

Պտղաբուծությամբ երկու համայնքներում զբաղվում են տնտեսությունների մոտ 60%-ը, իսկ Փոքր Վեղիում՝ 30%-ը:

Մշակվող այգիների բաշխվածքն ըստ տնտեսությունների

Տնտեսությունների դասակարգումը	Այգիների չափերը	Տնտեսությունների բաշխվածքը
Խոշոր	1-3 հա	15%
Միջին	0,7 հա	55%
Փոքր	0,3 հա	30%

Փորձից հայտնի է, որ Հայաստանի շուկայում ծիրանի “առաջին և վերջին” բերքը վաճառվում է անհամեմատ ավելի բարձր գներով, քան միջանկյալ

ժամանակահատվածում, երբ երկրի բոլոր մրգատու գոտիներում այն արդեն հասած է լինում: Դիտարկվող համայնքներում ծիրանը հասնում է հենց այն ժամանակ, երբ շուկան հագեցած է դրանով: Հետևաբար, այգեգործներն իրենց բերքը վաճառում են միջին և ցածր գներով: Բերքի 40-50%-ը, որը կազմում է բարձրորակ մասը, վաճառվում է 400-600 դրամով՝ արտահանող ընկերություններին, 10-20%-ը 100-130 դրամով հանձնում են Երևանի շուկաներում գործող վերավաճառողներին, մնացած մասն էլ մթերվում է պահածոների գործարանների կողմից՝ միջինը 50-80 դրամով (եթե փոքր տնտեսություններ են և ստանում են քիչ ծավալի բերք, ապա բերքի հանձնումը կատարվում է վերավաճառողների միջոցով, ովքեր հավաքում են տնտեսություններից 30 դրամով և հանձնում գործարանին՝ մեծ ծավալով):

Մեկ հեկտար ծիրանի և դեղձի այգու մշակման համար ծախսվում է 400 հազար դրամ: Մշակումից հետո բերքահավաքի վրա ծախսվում է 1տ.-ի համար 40 հազար դրամ: Այս ծախսը հավասարապես աճում է՝ կախված այդ տարում ստացված բերքի քանակից: Մեկ հեկտար ծիրանի այգու բերքի վաճառքից ստացվում է 7 մլն դրամ հասույթ (30տ. բերքի դեպքում): Շահույթը կազմում է միջինը 5մլն դրամ:

Վերը նկարագրվածը ցույց է տալիս ոլորտի հիմնական պատկերը: Մակայն համայնքում կան քիչ թվով պտղագործական տնտեսություններ՝ մոտ վեցը, որոնք ծիրանի այն մասը, որը պետք է վաճառեին 100-130 դրամով, իսկ դեղձը՝ 200-250 դրամով, հանձնելու փոխարեն վերամշակում են, հիմնականում որպես չիր: Չորանոցներն արևային են: Չրագործության առաջին փորձերն արվել են տարիներ առաջ “Շեն” հիմնադրամի աջակցությամբ: Ներկայում գործում են դրանցից 3-ը: Արտադրում են ծիրանի, դեղձի և սալորի չիր: 1 կգ դեղձի չիրը ստանում են 7-10 կգ թարմ պտղից, իսկ ծիրանի չիրը ստանում են միջինը 5-7 կգ թարմ պտղից: Ընթացիկ տարում արտադրվել և վաճառվել է մոտ 5 տոննա չիր, 1կգ-ը՝ 2000-3500 դրամով: Որակյալ չրի մի մասը արտադրողները հանձնում են Երևանի շուկաներում գործող վերավաճառողներին, մի մասն էլ՝ արտահանողներին: Միջին որակի չիրն էլ

արտադրողներն իրացնում են Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում՝ ապրանքափոխանակության միջոցով:

Այգեգործների մեծ մասը պատրաստակամ են հիմնել չրանոցներ և զբաղվել չրագործությամբ: Սակայն մեծամասնությունը չունեն նախնական գիտելիքներ վերամշակման տեխնոլոգիաների և չորանոցների կառուցման վերաբերյալ:

Պտղի վերամշակումը համայնքի ներսում հնարավորություն է ընձեռում ավելացնել լրացուցիչ եկամուտ յուրաքանչյուր կիլոգրամ պտղի դիմաց: Եթե 1 հեկտարից ստացվող բերքի ընդամենը 20%-ը՝ մոտ 4000 կգ (սա այն մասն է, որը վաճառվում է 100-150 դրամով) վերածվում է չրի, ապա տնտեսությունը բերքի վաճառքից ստացվող 400-500 հազար դրամի փոխարեն ստանում է առնվազն կրկնակի ավել եկամուտ:

Մեջբերումներ չրագործ և այգեգործ Միսակից

53-ամյա Միսակ Հարությունյանը Արարատի մարզի Փոքր Վեղի գյուղում 1996 թ.-ից հիմնել է իր չրանոցը: Սակայն դրանից առաջ էլ չրագործությամբ զբաղվել է: «Ծիրանի ագի ունենք, երբ բերքը շատ էր լինում, որ մասը մնում էր, տնային պայմաններում չիր էինք պատրաստում: Բայց չրանոցի հիմնումից հետո արդեն այնտեղ եմ արտադրում», - ասում է չրագործը:



Արտադրում է տարբեր տեսակի չրեր: Կախված բերքից՝ տարբեր տարիներին տարբեր քանակի չիր է արտադրել: Վաճառել է միայն Հայաստանում: UMCOR կազմակերպության շնորհիվ ԱՄՆ-ում մասնակցել է չրագործությանը, մարկետինգին և վաճառքին նվիրված սեմինարների շարքին:

Չորացնում է ավանդական՝ արևային եղանակով: Մեջբերում է. «Հնարավոր չէ առանց ծծմբի մեծ քանակի որակյալ արտադրանք ստանալ: Լինում են պատվերներ, որոնք ես իրականացնում եմ բացարձակապես առանց ծծմբի, սակայն դրանք շատ սահմանափակ են: Ես ՓՄՁ ԶԱԿ-ի կազմակերպած չրագործության սեմինարների ընթացքում իտալացի մասնագետ Ռուջերո Մալոսիի հետ էի զրուցում: Նա ասաց, որ մեր օգտագործած ծծմբի քանակն աննշան է՝ եվրոպականի և այլ երկրների կիրառած քանակի հետ համեմատած»: Ըստ Հարությունյանի՝ իտալացի փորձագետն ասել է, թե միջազգային չափորոշիչով թույլատրվում է մինչև 10 % ծծումբ օգտագործել, սակայն հայկական չրերում և հատկապես իր արտադրատեսակում ծծմբի քանակը չի գերազանցում 0,3 %-ը:

Հարությունյանը Հայաստանի չիր արտադրողների միության անդամ է: Ասում է, որ չրի արտադրությունը Հայաստանում սկսել է զարթոնք ապրել: Այս տարի նա արտադրել է 1300 կգ չիր: Արդեն անհրաժեշտ է լուրջ աշխատանք կատարել՝ հայկական չիրը միջազգային շուկա դուրս բերելու ուղղությամբ:

Պտղագործության ոլորտի հիմնախնդիրները


Հիմնական խոչընդոտները հանդիպում են մշակման փուլում՝ կապված դեղանյութերի որակի հետ: Մարդիկ ձեռք են բերում անորոշ ծագմամբ և առանց երաշխիքի բուժանյութեր (հիմնականում Էջմիածնից և Երևանի շուկաներից), որոնք ամենից հաճախ չեն ապահովում սպասված արդյունքները: Այդ պատճառով հարկ է լինում նույն միջոցառումը (ծառերի բուժումը) կատարել 3-4 անգամ, ինչի հետևանքով մինչև հիվանդության չեզոքացումը, աճում են ծախսերը, տուժում է բերքը: Աջակցության կարիք կա նաև գաճաճ տնկիների ձեռք բերման, մատչելի վարկերի, նոր այգիների հիմնման, ոռոգման ջրի անհրաժեշտ քանակի ապահովման, վերամշակման կազմակերպման և սարքավորումների ձեռքբերման հարցերում:

Համայնքներում գործել են ընդհանուր սեփականություն հանդիսացող խորքային հորեր, որոնց միջոցով մարդիկ ջուր են ապահովել այգիների համար: Ներկայումս դրանք չեն գործում պոմպերի բացակայության և այլ խնդիրների պատճառով: Դրանց վերականգնումը հնարավորություն կտա կրկին ապահովել պահանջվող ջրի քանակը ոռոգման սեզոնին: Փոքր Վեդի և Եղեգնավան համայնքներում կան 3 չգործող հորեր, որոնցից յուրաքանչյուրն ապահովել է 50 հեկտարի ոռոգում:

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊՏՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂՈՒՄ**

Գործողություններ	Պատասխանատուներ
Այգեգործական ծառայությունների կենտրոնի հիմնում, որակյալ սպասարկում	CARD
Արևային և այլ չորանոցների հիմնում, արտադրության կազմակերպում:	Համայնքի գործարարներ, USAID PRP
Սառնարանների հիմնում	Համայնքի գործարարներ, USAID PRP
Մասնագիտական դասընթացների կազմակերպում	USAID PRP
Սարքավորումների ձեռքբերման աջակցություն	USAID PRP, ՓՄՁ ԶԱԿ, CARD,
Գործարարության զարգացման դասընթացներ	ՓՄՁ ԶԱԿ
Ֆինանսական աջակցություն	USAID PRP , ՓՄՁ ԶԱԿ
Կապերի ստեղծում Տավուշի և Արմավիրի մարզերի չրերի հավաքման կայանների հետ	ՓՄՁ ԶԱԿ
Փորձի փոխանակման կազմակերպում համայնքի սկսնակ չրագործների և Հայաստանում կայացած չրագործների միջև	USAID PRP, ՓՄՁ ԶԱԿ
Շուկայի հասանելիություն	USAID PRP
Ոռոգման ջրի լրացուցիչ աղբյուրների (խորքային հորերի) վերականգնում:	ՏԻՄ, USAID PRP

ՊՏՈՒՂՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՇՂԹԱ



Դաշտավարություն

Մշակվում է 443 հա լոլիկ, ձմերուկ, սեխ, տաքդեղ, դդում, վարունգ, սոխ:

Մշակաբույսերի տեսականին և ծավալներն ըստ համայնքների:

Բանջարաբուստանային մշակաբույսեր	Մշակվող ծավալներն ըստ համայնքների (հա)		
	Լուսառատ	Փոքր Վեղի	Եղեգնավան
1. Ձմերուկ	80	60	40
2. Սեխ	25	40	-
3. Լոլիկ	120	40	30
4. Վարունգ	5	7	6
5. Դդում	-	-	8
6. Տաքդեղ	2	2	2
7. Սոխ	-	3	2
8. Սմբուկ	4	4	3
Հացահատիկային մշակաբույսեր			
9. Ցորեն	95	120	35
10. Գարի	-	20	-
Տեխնիկական մշակաբույսեր			
11. Եգիպտացորեն	5	100	-
12. Արևածաղիկ	4	25	25

Բանջարաբուստանային մշակաբույսերի մեջ գերակշռող մասը կազմում են լոլիկը, ձմերուկը և սեխը:

Լոլիկի մշակման առանձնահատկությունները

Լոլիկի մեկ հեկտարից ստացվում է մոտ 60 տոննա բերք: Սա այն դեպքում, երբ ոռոգումն իրականացվում է 4-5 անգամ՝ պայմանավորված ջրի ոչ ժամանակին մատակարարմամբ և սակավությամբ: Իսկ 10-անգամյա ոռոգում ապահովելու դեպքում, ինչը ոռոգման պահանջվող քանակն է, բերքատվությունը հասնում է 100-110 տոննայի: 1 հեկտար լոլիկի մշակության վրա ֆերմերները ծախսում են միջինը 1,5

մլն դրամ, և 200-300 հազար դրամ կազմում են իրացման (բերքը պահածոյի գործարաններ և շուկաներ տեղափոխելու և այլն) հետ կապված ծախսերը: Բերքի 40%-ը մարդիկ վաճառում են մարզի և Երևանի շուկաներում՝ 100-130 դրամով, մյուս՝ գերակշռող մասն էլ հանձնում են պահածոների գործարաններին՝ 30 դրամով:

Վերջին 2 տարիներին Փոքր Վեղի համայնքում չրագործները սկսել են քիչ քանակությամբ լուլիկի չիր արտադրել: Արդյունքներից գոհ են, պատրաստվում են հիմնել և ընդլայնել չորանոցները:

Ձմերուկ և սեխ

1 հեկտարից ստացվում է միջինը 50 տոննա ձմերուկ և 25 տոննա սեխ: Յուրաքանչյուրի 1 հեկտարի մշակության վրա ծախսվում է մոտ 900 հազար դրամ: Մեծածախ շուկայում ձմերուկը վաճառվում է 60-80 դրամով, իսկ սեխը՝ 80-100 դրամով: Լուսառատ համայնքում մշակվող սեխը որակական և համային հատկանիշների շնորհիվ հանրապետությունում մեծ պահանջարկ է վայելում, իսկ սպառումն իրականացվում է դյուրին և բարձր գներով: 1 հեկտար ձմերուկի բերքի վաճառքից ստացվում է մոտ 2 մլն դրամ շահույթ:

Հացահատիկ

Մշակում են 250 հեկտար ցորեն, 20 հա գարի: Ցորենի և գարու 1 հեկտարի միջին բերքատվությունը 4 տոննա է: Այս ցուցանիշները երկրի ամենաբարձր և մրցունակ ցուցանիշներն են, սակայն եթե ճյուղը համեմատում ենք համայնքի ներսում այլ ճյուղերի հետ, ապա եկամտաբերությամբ հացահատիկի մշակումը զիջում է մնացած ճյուղերին: 1 հեկտար ցորենի բերքի վաճառքից շահույթը կազմում է 600 հազար դրամ:

Եգիպտացորեն

Եգիպտացորենի 1 հեկտարից ստացվում է 10տ. (կամ 36000 հատ) բերք: 80%-ը վաճառում են հատով՝ 1 հատը 50-70 դրամ, որակական բարձր հատկանիշների շնորհիվ: Մնացորդն էլ օգտագործում են որպես անասնակեր՝ սեփական ֆերմաներում: 1 հեկտար եգիպտացորենի բերքի վաճառքից ստացվում է մոտ 1,4 մլն դրամ եկամուտ:

Արևածաղիկ

Արևածաղիկ հիմնականում մշակում են Փոքր Վեդի և Եղեգնավան համայնքներում՝ մոտ 50հա: Բերքատվությունը մեկ հեկտարի համար կազմում է 2-2.5տոննա: 1 հա արևածաղիկ մշակելու համար մարդիկ ծախսում են միջինը 500-600 հազար դրամ: Վաճառում են 1կգ-ը 500 դրամով՝ Երևանի մեծածախ շուկաներում կամ վերավաճառողներն իրենք են գնում արևածաղիկը՝ հենց համայնքներից: Շահույթը 1 հեկտարից կազմում է 600 000 դրամ:

Հողագործության ճյուղում ոլորտների համեմատություն և մրցունակության վերլուծություն

Ոլորտ	Արտադրողականություն*	1 հա-ից ստացվող շահույթ
Խաղողագործություն	32 500 դրամ	2 125 000 դրամ
Պտղագործություն (ծիրան)	50 000 դրամ	5 000 000 դրամ
Ցորեն	30 000 դրամ	600 000 դրամ
Եգիպտացորեն	35000 դրամ	1 400 000
Զմերուկ	33 000 դրամ	2 000 000 դրամ
Լոլիկ	25 000 դրամ	3 000 000 դրամ
Արևածաղիկ	15 000 դրամ	600 000

Համեմատականը հուշում է, որ ամենակամտաբեր ոլորտներն են խաղողագործությունը, պտղագործությունն ու լոլիկի մշակումը: Արտադրողականությամբ ճյուղի գրեթե բոլոր ոլորտներն էլ մրցունակ են երկրի այլ համայնքների հետ համեմատած: Սակայն համայնքների ներսում տեխնիկական և բուստանային մշակաբույսերն էապես զիջում են այգեգործության ոլորտին, եթե որոշներն էլ արտադրողականությամբ մրցակցում են, ապա շահութաբերությամբ զիջում են միանշանակ: Աստիճանական անցումը տեխնիկական սորտերից դեպի այգիների հիմնմանը, հնարավորություն կտա տնտեսություններին առնվազն կրկնապատկել եկամուտները:

Տեխնիկական և հացահատիկային մշակաբույսերի մասշտաբային մշակումը պայմանավորված է նաև տվյալ բերքի պահպանման երկար ժամկետի գործոնով: Այսինքն, եթե մրգերի հասունացման դեպքում խնդիր է առաջանում բերքն արագ իրացնել, որպեսզի չփչանա, ապա ցորենի և արևածաղկի դեպքում նման խնդիր չկա, և մարդիկ կարողանում են պահեստավորել ապրանքը, մինչև կվաճառեն: Այս գործոնի հետ հաշվի նստելը արդի թեմա էր անցնող տարիներին, սակայն այսօր, երբ բավական առաջընթաց կա խաղողի մթերման և մրգերի արտահանման, ինչպես նաև չրերի արտադրության և արտահանման ուղղությամբ, ապա հողերի տրամադրումը տեխնիկական մշակաբույսերին դառնում է, մեղմ ասած, ոչ արդյունավետ:

* Արտադրողականությունը՝ մեկ օրում մեկ մարդու կողմից ստեղծվող հավելյալ արժեքն է

Փոքր Վեդի, Լուսառատ և Եղեգնավան համայնքների մրցակցային առավելությունները

- ⇒ Աշխատասիրությամբ աչքի ընկնող բնակչություն:
- ⇒ Տաք և արևոտ օրերի երկար տևողություն, ինչն ապահովում է հողերի մշակման երկար սեզոն:
- ⇒ Շուկայում հայտնի “Լուսառատի սեխ” /համային բարձր հատկանիշներով և քաղցրությամբ/:
- ⇒ Երևանի շուկային մոտ գտնվելը:
- ⇒ Հողերը դասվում են հանրապետությունում ամենաբերրի հողերի շարքին:
- ⇒ Հարթավայրային գոտի, որը հնարավորություն է ընձեռում արևի ճառագայթների առավելագույն կլանմանը բույսերի կողմից:
- ⇒ "Խոր Վիրապ" եկեղեցի:
- ⇒ Երևան-Մեղրի գլխավոր մայրուղին անցնում է համայնքի կողքով, ինչը հնարավորություն է տալիս ամռան ամիսներին կազմակերպել բերքի վաճառքը ճանապարհի եզրերին՝ տաղավարներ տեղադրելով:
- ⇒ Փոքր Վեդի գյուղի տարածքում է հայտնաբերվել Հայաստանի նախկին մայրաքաղաքներից մեկը՝ Արտաշատը:



Անասնապահություն

Անասնապահությունն այս գոտում սկսել է զարգանալ 1990-ականներից մինչև 2000-ականների վերջերը: Երևույթը կապված է եղել այդ տարիներին մրգերի, խաղողի բանջարեղենի վերամշակմամբ զբաղվող օղակների բացակայությամբ, որի արդյունքում պտուղ-բանջարեղենի պահանջարկը հանրապետությունում հասել էր նվազագույնի: Հետևաբար, մարդիկ սկսել են բանջար-բոստանային կուլտուրաների մշակման և այգեգործության փոխարեն զբաղվել առվույտի, ցորենի, գարու և եգիպտացորենի մշակությամբ և անասնապահությամբ: Լինելով արոտավայրերով և խոտհարքերով ոչ հարուստ տարածք, ֆերմերներն սկսել ու շատացրել են առվույտի մշակման ծավալները: Երեք համայնքներում միասին մշակվում է 285 հա առվույտ: Առվույտի 1 հեկտարից ստանում են 18-20 տոննա անսանակեր, ինչը հանրապետության ամենաբարձր ցուցանիշն է՝ միջինից կրկնակի անգամ շատ:

Այստեղ առկա են հիմնականում շվից և կովկասյան գորշ տեսակների խաչասերումից ստացված և խորհրդային շրջանից ժառանգված մոտ 1600 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից 700-ը՝ կովեր: Կաթնատվության միջին ցուցանիշը տարեկան 2000 լիտր է: Միայն Եղեգնավան համայնքում գործող խոշոր ֆերմերներից մեկն ունի բարելավված ցեղատեսակներ:

Անասնազլխաքանակն ըստ համայնքների.

	Լուսառատ	Փոքր Վեղի	Եղեգնավան
Խոշոր եղջերավոր	230	700	700
Որից՝ Կովեր	130	270	385
Խոզ	80	34	60
Մանր եղջերավոր	60	200	2300

Համայնքներում արտադրվող կաթը վերամշակվում է որպես մածուն, պանիր և կարագ՝ տնային պայմաններում: Կարագն օգտագործում են սեփական սպառման համար, վաճառում են պանիրը, կաթը և մածունը: Մեծ քանակությամբ արտադրողները պանիրը հանձնում են Երևանի խանութներին և վերավաճառողներին, իսկ կաթն ու մածունը կանայք վաճառում են Երևանի, Արտաշատի և հարևան համայնքների բակերում:

Պանիր ընդունողները մշտական պահանջարկ են ապահովում, սակայն պահանջում են ստանդարտ և փաթեթավորված ապրանք, որը դեռ պանրագործները չունեն, սակայն խոշորներից երկուսը պատրաստվում են հիմնել և կազմակերպել ստանդարտներին համապատասխանող արտադրություն:

Տնտեսության այլ ճյուղեր

Ջերմոցային տնտեսություններ

Տարածքում գործում են մոտ 50 ջերմոցային տնտեսություններ՝ 200-400մ² մակերեսներով: Մշակում են լոլիկ, վարունգ, տաքդեղ, կարտոֆիլ, ինչպես նաև աճեցնում են ծաղիկներ: Ջերմոցներում մշակությունը տարվում է երկու փուլով՝ փետրվարի վերջերից մինչև հուլիսի կես և օգոստոսից մինչև նոյեմբերի վերջ: Ձմռան ամիսներին գործունեությունը դադարեցվում է՝ պայմանավորված ջեռուցման բարձր ծախսերով: Միայն ծաղիկ աճեցնող 2-3 տնտեսություններն են շուրջ տարին գործում:

Հաջողված գյուղատնտես Ռազմիկ Քեշիշյան

Ռազմիկ Քեշիշյանն ապրում է Արարատի մարզի Լուսառատ համայնքում: Արդեն 6 տարի զարգացնում է ջերմոցային տնտեսություն, քանի որ այն, իր կարծիքով, ավելի եկամտաբեր է, քան այգեգործությունը: Ունի 450քմ ապակեպատ և 250քմ պոլիէթիլենապատ ջերմոց: Զբաղվում է նաև խաղողագործությամբ ու բանջարաբուծությամբ: Հիմնել է նոր այգի՝ տանձենիներով, խնձորենիներով, սալորենիներով և ծիրանենիներով:



«Առաջին տարին սարքել եմ հասարակ ջերմոց: Տարեցտարի տեսնելով ուրիշներին՝ կատարելագործել եմ ջերմոցները: Ես նկատեցի, որ ֆինանսական առումով ջերմոցատերերն ավելի կայուն եկամուտ են ունենում», - հիշում է ֆերմերը: Չնայած ջերմոցներն ունեն ջեռուցման համակարգ, սակայն գազի գնի թանկ լինելու պատճառով Քեշիշյանը ստիպված աշխատում է սեզոնային. «լոլիկը տնկում եմ մարտի սկզբին, վերջացնում եմ հունիս-հուլիսի կեսին, քանի որ այդ ժամանակ է բերքը հասնում: Իսկ վարունգը տնկում եմ օգոստոսին», - ասում է 52-ամյա Հրաչ Քեշիշյանը:

Չնայած բարդություններին՝ Ռազմիկ Քեշիշյանը ցանկանում է ընդլայնել տնտեսությունը՝ հիմնելով նաև արևային չորանոց՝ չիր արտադրելու համար: Կառուցման համար անհրաժեշտ շինանյութն ունի, մնում է ժամանակ գտնել և

Ֆինանսներ՝ կառուցումն ավարտելու համար: «Եթե պետք եղավ, ես չրի հումքը կգնեմ: Ամեն ինչ պետք է անել, որպեսզի եկամուտն ավելանա», - ասում է ֆերմերը: Նաև ցանկանում է սառնարան հիմնել, որտեղ կպահի իր հիմնած խաղողի այգու սեղանի խաղողի բերքը և չիրը՝ հետագայում վաճառելու համար:

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՅՈՒՂՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ
Նոր ջերմատների կառուցում	Գործարարներ
Մասնագիտական դասընթացներ	CARD, ՀԲԱԿ, ՓՄՁ ԶԱԿ
Գործարարության դասընթացների կազմակերպում	ՓՄՁ ԶԱԿ
Ֆինանսական աջակցություն	ՓՄՁ ԶԱԿ, USAID PRP

Առևտուր

- 24 մթերային
- 40 գյուղմթերքի վաճառակետ /սեզոնային, որոնք ամռան ամիսներին գործում են ճամփեզրին/

Արտադրություն

- 6 հացի արտադրություն
- 7 չրանոց, 200 /տնային պայմաններում/
- 2 գինու համեմատաբար մեծ արտադրություն /տնային/, 5 փոքր /տնային/, 300 /պատրաստում են իրենց օգտագործման համար/

Ծառայություններ

- 1 հանդիսությունների սրահ
- 3 վարսավիճարանոց
- 1 ավտոլվացման կետ
- 1 գյուղ. տեխ. սպասարկման կետ

ՏՈՒՐԻԶՄ

“Խոր Վիրապ” եկեղեցու առկայությամբ պայմանավորված, ամռան ամիսներին Փոքր Վեդի է այցելում օրական 300-500 մարդ: Այցելուները և արտասահմանից և երկրի ներսից են: Տուրիստներն այցելում են եկեղեցի և առանց համայնքում ժամանակ անցկացնելու հեռանում. համայնքում չկան տուրիստին հետաքրքրող ծառայություններ: Սակայն համայնքի գործարարները, տեսնելով պահանջարկի

առկայությունը, արդեն սկսել են մտածել այդ ուղղությամբ և կազմել պլաններ՝ կապված սրճարանների, հասարակական սննդի օբյեկտների, հետազայում նաև հյուրատների հիմնման շուրջ: Միտումների դրական զարգացումների դեպքում նախաձեռնություններ կիրականացվեն նաև տուրիզմի զարգացման ուղղությամբ:

Կանանց մասնակցությունը արժեքային շղթաներում

Պտղագործություն

Այս ոլորտում, աճեցման փուլում կանայք մասնակցում են միայն բերքահավաքին՝ կատարելով աշխատանքի 20%-ը: Վերամշակման փուլում ունեն 90% մասնակցություն լվացման, տեսակավորման և մաքրման աշխատանքներում: Պտղի վաճառքով զբաղվում է կանանց 30%-ը: Մոտ 10 հոգի վաճառքը կազմակերպում են մայրուղու հարևանությամբ տեղակայված տաղավարների միջոցով, մնացածը տանում Երևանի շուկաներ և հանձնում վերավաճառողներին: Չրի փոքր ծավալի արտադրությամբ են զբաղվում 2 կին:

Խաղողագործություն

Խաղողի աճեցման փուլերում մասնակցում է կանանց գրեթե 50%-ը: Էտման աշխատանքների 40%-ը կատարում են կանայք, չորկապի և ծկատման ժամանակ աշխատանքի 90%-ը, և բերքահավաքի 70%-ը: Մոտ 10 կանայք ունեն իրենց սեփական այգիները և իրենք են վարում տնտեսությունները:

Սառնարանային տնտեսությունների աշխատանքների 70%-ում ներգրավված են կանայք:

Անասնապահություն

Անասնապահության ոլորտում կթի, խնամքի և կաթնամթերքի վերամշակման 90% աշխատանքները կանայք են իրականացնում: Համայնքից մոտ 20 կին զբաղվում են տնային պայմաններում արտադրված կաթնամթերքի վերավաճառքով: Ապրանքն իրացնում են Երևանի և Արտաշատի բնակելի թաղամասերում:

Եվս 7 կին ունի սեփական գործը առևտրի ոլորտում (խանութներ):

Կանանց 10%-ն ունի բարձրագույն կրթություն, 20%-ը միջին մասնագիտական և մնացածը միջնակարգ կրթություն:

Շնորհակալություն ենք հայտնում Փոքր Վեղի, Լուսառատ և Եղեգնավան համայնքների գյուղապետարաններին՝ ի դեմս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացման աջակցման համար:

